

կողմանց լեզուներու հետ ինսամութիւն ու նենալ կը թուի, և սակայն կը կունուի՝ շնորհիւ յԱսորեստանեայց փոխ առնուած գաղափարանիշերու, անիծից ձեերու, և մի քանի խալդեան ծանօթ բառերու՝ որոց ցուցակն հարստանալու վրայ է:

Գալրվ խալդեան սեպամակ զրերով արձանագրութեան լեզուին՝ ըսինք արդէն թէ՝ զեռ խնդրոյ տակ է. ումանը (Հինքս, Մորդման, Հիսարլեան) հին հայերէն կը համարին, այլը (Պանտալէնան) բառերու մեծամասնութիւնն միայն հայերէն կը կարծեն, և միւսներն զրացի լեզուաց յատուկ, մի քանի գիտուններ (Լընորման, Սէյս) վրացերէնի մերձաւոր կ'ենթաղրեն, կան ալ որ (Գալրուստ Տէր Մէրժիշեան) Շւտերէնի մօտ կը գտնեն և կամ անծանօթ լեզու մը կը համարին (Կիւար):

Խալդեան արձանագրութեանց մէջ ներկային շատ մը աշխարհագրական անուններու ցանկն տուինք արդէն (էջ 7): Յատուկ անուններէ Մէնուաշի՝ Մանաւազ, Արգիստիսի՝ Արագած, և Արամէի՝ Արամ ըլլալուն կասկած չունիմք:

Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱԿԱՆ

Շարայարելի

ասծ են նաև Լընորման, Հինքս, Լէման, Իուբերդ, Լայարդ և այլք:

Աւրարտերէնով և մի այլ ծանօթ լեզուով արձանագրութիւններ մծամասն պիտի նապատճեն ընթերցման և հասկացողութեան, բայց միայն 1875ն երկեզուեան (Աւրարտերէն և Ասորեստաններէն) արձանագրութիւն մը գտնուած է, սակայն շատ համառոտ ըլլալուն մնե ծառայութիւն մը չմատոյց:

Տգիտութիւնը աշխարհիս ամենէն մնե պատռհասն է (Չուտա):

Գիտ իմաստատէր դժնդակ չարիք կը համարէր՝ չարեաց համբերէն չի գիտնալը:

Ակեպուակամութիւնը՝ բարձրահասի եղողներու յատուկ չէ՝ այլ կարճամիտ և հպարտ անձանց սիփական է:

Զգուշացի՞ր առաջին սիսալմունքէ:

ԱՊՈՒԻՆԱՄՐ

Պահլաւունի Գրիգոր, Վահրամ իշխանաց-իշխան, Ապուլզարր-մարզպան, Գրիգոր Մագիստրոս և ուրիշները իրենց տիտղոսը՝ տոհմանում զործածում են Ապուակամը և տոնը Ապուամիրենը, մի այնպիսի խորթ ազգանունով, որ անշուշտ օտարամուտ է: Այս օտարութիւնը ազգանունն բացարութիւնը չի տել Հայր - Ալիշանը իւր «Երիրակի Տեղազգութեան» մէջ, նոյնպէս ինձ չի պատահել մի ուրիշ տեղ զըս մեկնութիւնը կարդալ:

Ամսիս 12ին Մարմաշէնի տաճարն այցելելիս այս ազգանունը զարձաւ մտածութեանս առարկայ, որի մասին հասայ հետեւեալ Եղբակացութեան, որը հասցընում եմ « Բազմավէպի » խմբագրութեան:

Ինչպէս յայտնի է հնումը մեր երկրում ազգանուններ չէին զործածում, այլ բանեցնում էին միայն տոհմական անունները՝ Արշակունի, Պահլաւունի, Բազրատունի, Իշտունի, ևն, որոնց յատուկ էին զաւառներին տիրոց նախարարական աներին: Ապուամիրի ծագումը չի կարելի հներում փնտուել, նա ծնունդ է Սարակինոսների տիրապետութեան, որոնց գերիշխանութեան ժամանակ հայ քաղաքակրթութեան վրայ իրենց ներգործութիւնը թողեց Արարական լեզուն: Ապէհաջ, Ապէ Հասան, Արզմակէ, Ապղարիդ, Ապու-Մուար, Ապուսերէ, Ապուէիդ ևայլն, այնպիսի յատուկ անուններ են, որոնց բազրադիմ ամիրապետութեան շրջանից անզրադարձել են մեր իշխանական տները:

Ինչպէս յայտնի է, Ամիրապետները իշենց ստորադաս իշխաններին պաշտօններ յանձնելիս, նրանց շնորհում էին բնորոշ տիտղոսներ, որոնց յարմարեցնում էին կամ պաշտօննեանների զործունէութեան և կամ ծագման հետ: Արքանեանց շրջանում զործածութեան մէջ ընկան՝ Մօհէնդ-Դօվլէչ, Աթաղէդ-Դօվլէչ, Երէփէթ-Դօվլէչ և ուրիշ տիտղոսներ: Սեղուկների շրջանում Աթարէզ, Աղուղայ, և Ամիր-Շահ, Բախ-

տիար, թաղիաւղին, Խաղան, Մահմէլիք,
Նորէդ-Դին Կայլն:

Զեր կարող չը պատահել, որ Պահլաւունինքն էլ, գարու սովորութեան համաւածայն չը հետամտէին Արևելքի հրամանակալ Արք Ամբիրապետից որոշ հրովարտակ ձեռք բերել իրենց իշխանական տոնի արտղուսով, որոնք միշտ ձգտել էին ինչպէս Հայ-Եկիլքեցական, նոյնպէս պետական իշխանութեան գաւազնեները իրենց ձեռքերի մէջ ունենալ: Եւ ինչ աւելի կարող էր հաճելի լինել Պահլաւունինքն իրենց, բացի իրենց մէծ Պատիկ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի տիտղոսը վաւերացնել, վերանորոգել տալ նոյնպէս Ամբիրապետների հրովարտակով և կրել իրենց Պահլաւ ազգանւան հետ, որը գործածել են իրենց բոլոր շինաւածների արձանագրութիւնների մէջ:

Այս պարագան մեզ ստիպում է ենթադրել, որ Ավորութիւնը մի տիտղոս արձանագրած և շնորհած Վահրամ իշխանաց-իշխանի պատիկն, կամ նրա հօրը ամերապետական հրովարտակով: Այս Ավորութիւնը բարոյ թւում է Արու-Դամբէր բարոյ աղճատութիւն ու կրծասումը: Մ տառից յետոյ Պ տառի արտասանութիւնը այնքան իսրոթ է Հայերին մէջ, մանաւանդ ու տառից առաջ և այն էլ իի կրծասումից յետոյ, որ ինքնըստինքեան համականալի է, թէ ինչի է համրացել և չըցացել Պ տառը: Այսուղան բարութիւնը բարոյ աղճատակը դարձել է Ավորութիւնը, որը նշանակում է Դամբէրի սերունդ, կամ աւելի ճշշտը Լուսաւորչի — (Բարագի) յաջորդները — Լուսաւորչի զարմը:

Մարտ

Աւագան

Աշխատութիւնը՝ ոսկի կը ծնուցանէ. ողջմը-տութիւնը՝ զայն կը պահէ:

Աը քնանայի և կ'երագէի թէ կհանքը գեղեց-կութիւն է. բայց արթնցայ և տեսայ թէ կհանքը պարօն հասուրէ, է:

Հնազանդիլ սորվելով՝ հրամայել կը սորվուի:

Այլոց երջանկութեան վրայ՝ բնաւ մի նախանձիր. (Ֆենել):

Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն. Ք.

Գ. Ի. Բ. Գ. Ի. Լ. Ի. Ո. Ս. Ի. « Ե Ն Է Ա. Կ. Ա. Ն. » էն

Պատմ. ՏՐՈՒԹ ԿՈՐԱՎԱՐՈՒՄՆ

(Ա. մասը տես Բագմ. 1908, Ապրիլ, էլ 175)

« Ճիշդ այն պահուն՝ ուր կը սկըսի առջի բունն՝ Աստուածներուն հանոյական բաղցր ընծան՝ Հեք մահացուաց ոսկորներուն մէջ սողալ, Ահա Հեկտոր բունիս մէջ ինձ երեցաւ Տրոտում տըխուր՝ արտօսրաբուխ աչքերով. Անհայտ ինչպէս տեսայ իրբմին զանի Ընդպար երկծի կառքն՝ սեցած, փոշեից, Արինթաթախի, և խրացին ծակ ոտքին ուսած: Ամայ ինծի, ոճ, ինչ դարձեր էր անի, Ռդքան փոխուեր էր երրիմին Հեկտորէն, Որ Աթելի կողոպաւները հազած Մեզի կու զար, կամ փոխական իրե կըրակն Աքայցւոց նասասորմին կը նետէր. Մորուին աղտոտ, հողու բոլոր, ու մազէրն իր գեղեցիկ իրար կըպած արիւնով. Եւ կը կըրէր գեն իր վէրքերն անհամար Զորս հայրէնի պարիսպներուն չուրչն առաւ: Ինձ թըւեցաւ որ էն առաջ ես իրեն Ալզեցի այս սըխուր խօսքերը լալով.

« Ով Տրոյիոյ գու լոյս, ով յոյս մահասան Փարանացուց. այսքան ինչն ուշացար. « Ո՞ր կողմէրէն կու զաս, Հեկտոր անձկալի: « Մենք ոգեսառ՝ քուկիններէց շատերուն Ակոտորածէն, և քաղաքին ու մարդոց « Բիւր կերպակերպ աղէտներէն, ցաւէն վերջ՝ « Ըզքեղ, ոճ, ինչ վիճակի մէջ կը տեսնենք: « Ինչ գէպք զըժնէ կ'աղճատէ գէմքը պայծառ, « Եւ ինչ են այդ վէրքերն որ վրադ կը տեսնեմ»: « Ինքն ինծի շի՛ պատասխաներ, և ոչ ալ իմ սընոտի հարցութերուն փոյթ Կ'ընէ, Այլ հանելով իր կուրծքէն խոր հառաջներ, « Փախի՛ր Կ'ընէ, աստուածորդիդ, ոճ, փախիր, « Եւ ինքըզիկը պատէ այս բոցերէն. « Այն գրաւէր է թըշնամին պարիսպներն, « Ահա Տրոյան իր բարձրաբերձ կատարէն « Հիմնայառակ կը կործանե. կը բաւէ « Ինչ որ մինչեւ ցարդ գործուցաւ Պրիամու « Եւ հայրէններ համար. Եթէ Կարենար « Մահացու ձեռքը պաշտպանն Պերգաման, « կը պաշտպանուէր ան գեռ այս իմ բազուկով: « Ալլորութիւններն ու թերափիներէ Տրոյան « Փեզ կը յանձնէ. առ գուն զանոնք իբր ընկեր « Ճակատագրիդ, անոնց պարիսպ փընտոէ դուն,